
ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅԱԶԳԻ ԲԱԽՏԻՇՈՒ ԲԺԻՇԿՆԵՐԻ
ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Հռոմեական կայսրության փլուզումից հետո գիտության անկումը կարող էր հանգեցնել հունա-հռոմեական ժառանգության լիակատար մոռացությանն ու անհետացմանը, եթե չծագեր արաբական մեծ քաղաքակրթությունը:

Մուսուլմանական նվաճումները VII–VIII դդ. խալիֆայության իշխանության տակ դրեցին Եվրոպայի հարավի, Հյուսիսային Աֆրիկայի և Ասիայի հսկայական հողատարածքները՝ Պարսկաստանը, Սիրիան, Հայաստանը, Եգիպտոսը, Մարոկոն, Իսպանիան, մի խոսքով Հնդկաստանից մինչև Ատլանտյան օվկիանոսի ափերը: Եվ, այնուամենայնիվ, այդ կայսրության մեջ, իր մոլեռանդ նվաճումներով հանդերձ, ցուցաբերվեց բարձր հանդուրժողականություն օտար ավանդույթների և գիտելիքների նկատմամբ: Հունական և հռոմեական արժեքավոր ձեռագրերը, որոնք քրիստոնեության առաջին տարիներին անխղճորեն ոչնչացվում էին, արաբների կողմից խնամքով պահպանվեցին, թարգմանվեցին, հարստացվեցին մեկնաբանություններով և ընդունվեցին որպես գիտության ու իմաստասիրության հիմքեր: Այդուհանդերձ, պետք է ասել, որ արաբական քաղաքակրթությունն արաբական էր միայն այնքանով, որ զարգանում էր արաբերենով: Այդ քաղաքակրթության զարգացման գործում իրենց ծանրակշիռ ավանդն ունեցան Արևելքի և Արևմուտքի համարյա բոլոր ժողովուրդները՝ պարսիկները, ասորիները, իսպանացիները, հրեաները, հայերը, հնդիկները և ուրիշներ:

Արաբական խալիֆայությունում VIII դ.-ից այլ գիտությունների շարքում արագորեն սկսեց զարգանալ նաև բժշկությունը:

428–431 թթ. Կոստանդնուպոլսի պատրիարք, ասորի Նեստորը հիմնադրում է նոր քրիստոնեական հոսանք, որը հետագայում կոչվում է նեստորականություն: Այդ աղանդի հետևորդներ են դառնում քրիստոնյա ազգերի ներկայացուցիչներ հույները, հայերը, ասորիները, հրեաները և ուրիշներ: Շուտով նեստորականները, որպես հերետիկոսներ, սկսում են ենթարկվել հալածանքների, ինչի հետևանքով 431 թ. տեղափոխվում են Փոքր Ասիայի Եդեսիա քաղաքը: Այստեղ նրանք հիմնում են աստվածաբանական և բարձրագույն բժշկական դպրոցներ, որոնք շուտով լայն ճանաչում են ստանում տարածաշրջանում: Այստեղ ուսանում են նեստորական աղանդ դավանող տարբեր ազգերի երիտասարդներ: Սակայն նեստորականների հալածանքները շարունակվում են նաև Եդեսիայում, ինչի պատճառով 489 թ. նրանք տեղափոխվում են Պարսկաստանի հարավում գտնվող Մծրին և Ջունդիշապուր (Գունդիշապուր) քա-

ղաքները ու այստեղ հիմնում իրենց աստվածաբանական դպրոցներն ու եկեղեցիները: Շուտով Մծբինը դառնում է նեստորական մշակույթի կարևորագույն կենտրոն, որի աստվածաբանական և բժշկական դպրոցները փոխարինում են Եդեսիայի դպրոցներին¹: Ի դեպ, Մծբինը գտնվել է Հայոց Միջագետքում և, Հայոց թագավոր Տիգրան Բ-ի օրոք եղել է (մ. թ. ա. 95–55) հայկական պետության կազմում, ունեցել է շուրջ 100 000 հայ բնակիչ: Եղել է արքայից արքայի աթոռանիստ քաղաքներից մեկը, ուր պահվում էր նրա գանձերի մի մասը: Մ. թ. ա. 68 թ. քաղաքն անցել է հռոմեացիների, իսկ 363 թ.՝ պարսիկների ձեռքը: VII դ. գրավել են արաբները, որից հետո այնտեղ սկսել են բնակվել նաև արաբներ ու քրդեր: Միջին դարերում Մծբին վաճառականական քաղաքը պաշտպանված է եղել պարիսպներով ու բերդով: Այն եղել է քրիստոնեության տարածման նշանավոր կենտրոն, ուր գործել են մի քանի եկեղեցիներ, որոնցից այսօր պահպանված են միայն (այդ թվում հողի մեջ թաղված Սբ. Հակոբի եկեղեցու) ավերակները²:

Պարսկաստանում նեստորականներին կոչել են նաև ասորիներ, քանի որ աղանդի հիմնադիր Նեստորն ասորի էր, ինչպես նաև ասորի էին աղանդի հետևորդների մեծ մասը: Մինչդեռ նեստորականների, ինչպես և ընդհանրապես քրիստոնյաների մեջ բազմաթիվ էին հույները, հրեաները, հայերը: Եվ այսպես, հետագա 200 տարիների ընթացքում քրիստոնյա նեստորականները Մծբին և Ջունդիշապուր քաղաքները վերածեցին բժշկական խոշոր կենտրոնների, որոնցից վերջինը պատմությանը հայտնի է որպես Ջունդիշապուրի բժշկական դպրոց: VIII դ. արաբական խալիֆայության տիրապետության տակ գտնվող Ջունդիշապուր, Բաղդադ, Դամասկոս, Խորեզմ, Շիրվան, Բուխարա և այլ քաղաքներում ծաղկում էին գիտությունն ու արվեստները, գործում էին «իմաստության տներ», գրադարաններ, դեղատներ, «բժշկական ակադեմիաներ» և դրանց կից «առողջացման տներ»՝ հիվանդանոցներ:

Արաբական բժշկագիտական կենտրոններում կրթություն ստացած և իրենց գիտական աշխատություններն արաբերեն գրող բժիշկների մեջ մեծ թիվ էին կազմում նաև պարսիկները (Ռազես, Ալիցենա, Ալի-Բեն-Աբաս և ուրիշներ), հրեաները (Ասաֆ, Մոխսեյ-բեն-Մայմուն, Բահակ բեն-Ամրան և ուրիշներ), հույները (Գոստա-բեն-Լուգա կամ Լուկայի որդի Կոստա), նեստորականները (Աբուլ-Ֆարաջ, Բախտիշու ընտանիքի մի շարք ներկայացուցիչներ և այլն)³:

«Բժշկական մեծ հանրագիտարանի» (ԲՄՀ) «Բժշկություն» բառահոդվածի «Բժշկությունը Հայաստանում» ենթավերնագրի տակ կարդում ենք. «Հայ բժիշկները, ի շարս հույների և ասորիների, նշանակալի դեր են խաղացել Արաբական խալիֆայության ժողովուրդներին հին հունական բժշկական գրականությանը ծանոթացնելու գործում: Արաբական բժշկության ծագման դարաշրջանի

¹ Մ. Կ ա տ վ ա լ յ ա ն. Նեստորականություն.– Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՄՀ), հ. 8, Երևան, 1982, էջ 239:

² Թ. Հ ա կ ո բ յ ա ն. Մծբին.– ՀՄՀ, հ. 7, Երևան, 1981, էջ 638:

³ Л. А. О г а н е с я н. История медицины в Армении, в 5-и томах, т. 1. Ереван, 1946, с. 207, 216.

հռչակավոր բժիշկների շարքում էին հայ բժիշկներ Բախտիշուան և Սերապիոնը»⁴:

Ստորև ներկայացնում ենք Բախտիշու բժիշկների գերդաստանի առավել նշանավորներին:

ՋՈՒՐԴՋՈՒՍ ԻԲՆ ՋԻԲՐԱԻԼ ԻԲՆ ԲԱԽՏԻՇՈՒ (? - 765 - ?)

Джурджус ибн Джабраил ибн Бахтишу, Георгий сын Габриела сын Бахтишу, Джурджус ибн Бахтишу, Girgis ibn Bahtisu

VIII դ. Ջունդիշապուր քաղաքում է ապրել ու աշխատել միջնադարի հռչակավոր բժիշկ, ազգությամբ հայ, քրիստոնյա Ջուրջուս իբն Ջիբրաիլ իբն Բախտիշուն: Լինելով Ջունդիշապուրի բժշկական դպրոցի ներկայացուցիչ՝ նա հիմնադրել և ղեկավարել է քրիստոնեա-նեստորական ուղղվածության բժշկական իր դպրոցը, որտեղ կրթվել են տարբեր ազգերի երիտասարդներ: 765 թ. նա բուժել է ծանր հիվանդացած խալիֆ Ալ-Մանսուրին (754–776), որին մինչ այդ ոչ մի բժիշկ չէր կարողացել օգնել: Եվ չնայած Ջուրջուս իբն Բախտիշուն քրիստոնյա հայ էր և հրաժարվել էր իսլամ ընդունելուց, խալիֆը նրան նշանակում է խալիֆայության մայրաքաղաք Բաղդադի գլխավոր բժիշկ⁵:

Ջուրջուս իբն Բախտիշուն Բախտիշու բժիշկների գերդաստանի նահապետն է: Նա և նրա վեց սերունդների բազմաթիվ ժառանգները 250 տարի շարունակ (ընդհուպ մինչև XI դ. սկիզբը) հաջողությամբ ծառայել են որպես խալիֆների արքունական բժիշկներ, մուսուլմանական աշխարհում եղել են հռչակավոր, նաև՝ հարգված բոլոր տիրակալների կողմից⁶:

Գեորգի Բախտիշուան VIII դ. եղել է Ջունդիշապուրի հանրահայտ հիվանդանոցի ղեկավարը, ինչպես նաև մի շարք անվանի բժիշկներ տված գերդաստանի նախահայրը⁷:

Բախտիշուա գերդաստանի անդամների մեջ եղել են բժշկական աշխատությունների թարգմանիչներ և հեղինակներ, որոնք մեծ դեր են խաղացել արաբական երկրներում բժշկության զարգացման մեջ: Նկատենք, որ բժշկական ավանդույթների ուժը Հայաստանում այնքան մեծ է եղել, որ Հայաստանում բնակվող մի շարք ասորի (Աբուլ-Ֆարաջ) և արաբ բժիշկներ իրենց աշխատությունները գրել են հայոց լեզվով, ընդ որում դա տեղի է ունեցել այն ժամանակ, երբ արաբներն եղել է բժշկության պաշտոնական գիտական լեզուն⁸: Ի դեպ, միջին դարերում հայկական ազգային մշակույթի կենտրոններ կային նաև Հայաստանի սահմաններից դուրս: Դրանցից ամենահայտնիներն էին Բյուզանդական կայսրության Կեսարիա քաղաքը, որտեղ 370 թ. գործում էր մեծ ճանաչում ստացած հիվանդանոցը, Կեսարիայից քիչ հեռու գտնվող, բժշկության կենտրոն հանդիսացող Սերաստիա քաղաքը, որտեղ ապրել և աշխատել են միջնադարի հռչակավոր բժիշկներ Ավասափը, Բունիաթը, Ասարը :

⁴ Большая медицинская энциклопедия (*այսուհետև՝ БМЭ*), т. 14. М., 1980, с. 76–77, 180.

⁵ Т. С. С о р о к и н а. История медицины. М., 1994, с. 163–164.

⁶ Նույն տեղում:

⁷ БМЭ, т. 14, с. 76–77, 180.

⁸ Նույն տեղում:

ԲՄԱՀԱԿ (VIII-IX)

Исаак, Исхак

Բախտիշու տոհմի ժառանգ Բսահակ Բախտիշուն եղել է Գոնենի (Գոգեյն) հայրը, քանի որ վերջինս գրվում է Գոգեյն բեն (կամ իբն) Բսահակ (Գոգեյն որդի Բսահակի):

ԳՈՆԵՆ (800 / 809 – 850 / 873 / 877)

Գոգեյն բեն Բսահակ, Գոգեյն որդի Բսահակի, Гореин бен Исаак

Խունաին բեն Բսահակ (Բոաննիցիուս), Хунаин Бен Исхак (Иоанниций), Խունայն իբն Բսահակ, Хунайна ибн Исхак, из Хирь, Խունայն իբն Բսահակ ալ-Իրադի, Хунайн ибн-Исхак ал-Ибади, Հունայն իբն Բսահակ, Хунайн ибн Исхак, Hunain ibn Ishag

ԲՄՀ-ի «Բժշկություն» բառահոդովածի «Բժշկությունը արարական խալիֆայություններում» ենթավերնագրի տակ կարդում ենք, որ IX–X դդ. բնագիտական և բժշկական գիտելիքների հիմնական կենտրոնները գտնվում էին արարական խալիֆայության արևելյան տարածքներում: Այդ շրջանի ամենահայտնի բժիշկները գործում էին Բադղադում, Իրանի տարածքում և Միջին Ասիայում:

IX դ. արարական բժիշկները (Գոնենը, նրա որդի Հունեյն իբն-Բսահակը և ուրիշներ) հիմնականում զբաղվում էին անտիկ և բյուզանդական հեղինակներից թարգմանություններ կատարելով⁹: Բժշկության բուռն զարգացումը հրամայական պահանջ էր առաջացնում հաղորդակցվելու եվրոպական իմաստասերների և բժիշկների աշխատություններին, ուստի գիտնականների շրջանում ի հայտ էին գալիս հետազոտողներ, ովքեր նաև կատարում էին թարգմանություններ օտար լեզուներից: Այդ գործում մեծ դեր կատարեցին Բադղադի և Ջունդիշապուրի թարգմանական դպրոցները, որոնց ջանքերով անտիկ հեղինակներ Արիստոտելի, Պտղոմեոսի, Դիոսկորիդեսի, Գալիանոսի և այլոց աշխատությունները հունարենից ու լատիներենից, մեծ մասամբ ազատ փոխադրություն-խմբագրությամբ, թարգմանվեցին ասորերենի, ապա՝ արաբերենի և կազմեցին արարական գիտական համակարգի հիմքը:

Այդ գիտնականներից ամենահռչակավորը Բախտիշու ընտանիքի ներկայացուցիչ, նեստորական հռչակավոր բժիշկ, գիտնական և թարգմանիչ Գոգեյն բեն Բսահակն էր, որը տիրապետում էր արաբերենին, ասորերենին, հունարենին, լատիներենին և, իհարկե, հայերենին: Գիտական, փիլիսոփայական և բժշկական գրքեր հայթայթելու նպատակով նա ճանապարհորդել է Բյուզանդական կայսրությունում, որից հետո իր շուրջը համախմբելով թարգմանիչների՝ կատարել է դրանց թարգմանությունները: Նրանց մեջ էր նաև որդին՝ Բսահակը (Բսահակը)¹⁰:

Գոգեյնի գրչին են պատկանում Արիստոտելի, Արքիմեդի, Գալիանոսի (Գալեն), Էվկլիդեսի, Հիպոկրատի, Պլատոնի, Սոքրանոսի, Օրիբասիսի և այլոց ամ-

⁹ Նույն տեղում, էջ 76–77, 180:

¹⁰ Т. С. С о р о к и н а. Նշվ. աշխ., էջ 163–164:

բողջական աշխատությունների թարգմանությունները՝ կատարված ուղղումներով ու լրացումներով: Այդ աշխատություններից շատերին հավելել է արժեքավոր մեկնաբանություններ, կազմել հեղինակային հավելումներ և այլն: Հիշյալ թարգմանություններից բացի, Գոզեյնը գրել է նաև ավելի քան 100 բնօրինակ աշխատություններ, որոնցից առավել նշանակալի է «Աչքի ախտահարումը» («Տասը գրույց», «Գիրք աչքի մասին 10 գրույցներում») գիտական տրակտատը, որում գիտնականն ամփոփել է աչքի հիվանդությունների մասին բժիշկականաբույժի իր երկարամյա անձնական փորձը: Այն ակնաբուժական առաջին աշխատությունն է արաբական բժշկության մեջ, որում շարադրված են աչքի անատոմիան, ֆիզիոլոգիան, տեսողության մասին տեսությունը, աչքի հիվանդությունների ընդհանուր ախտաբանությունը և բուժումը: Ըստ ռուս հեղինակ Ե. Գրիցակի՝ արաբական բժիշկների ամենավաղ գրած աշխատությունը առավելապես ակնաբուժության մեջ մասնագիտացած բժիշկ Խունայն իբն Բսիակ ալ-Իբադիի (809–877) «Աչքի ախտահարումը» տրակտատն է¹¹: Բսկ ըստ ֆրանսիացի հեղինակ Լ. Մենյեի՝ դարաշրջանի ամենանշանավոր դեմքը Գոնենն է (800–850), որի անունը լատիներեն գրվել է Բոհաննիցիուս: Նրա միջոցով արաբները ծանոթացան Արիստոտելին, Հիպոկրատին և Գաղիանոսին, որոնց աշխատությունները նա թարգմանեց սիրիական բարբառի: Նրա շնորհիվ արաբները ի վիճակի եղան շարունակելու հունական բժշկության ավանդույթները: Գոնենի սիրած հեղինակը Գաղիանոսն էր, որից էլ փոխառել է տենդի բնորոշումը և տենդերի դասակարգումը¹²: Հայտնի է, որ Հունեյն իբն Բսիակը (Հոնսին բեն Բսահակ, 809–873), վկայակոչելով մարդու առողջությանը վնաս չհասցնելու բժշկի պարտքի մասին, հրաժարվել է մահացու թույն պատրաստելու խալիֆ ալ-Մութավաքիմի հրամանը կատարելուց¹³:

Այն, որ Գոզեյն բեն Բսահակը (Բոհաննիցիուս կամ Յուհանն) Բախտիշու տոհմի ներկայացուցիչն է, վկայում են նաև այլ հեղինակներ: Ըստ Հ. Մկրտչյանի, Ջուրջուս իբն Ջիբրաիլ իբն Բախտիշուի ժառանգներից է նաև առաջին արաբական խալիֆների ժամանակաշրջանում մեծ փառքի տիրացած բժիշկների ընտանիքի անդամ Յուհանն իբն Բախտիշուն¹⁴: Հունայն իբն Բսիակը (809–873) եղել է հռչակավոր բժիշկ և թարգմանիչ: Ենթադրվում է, որ արաբերեն է թարգմանել նաև Թեոմնեստոսի ձիագիտական և բուսաբանական երկերը: Նրա որդին է Բսահակ իբն Հունայն իբն Բսահակը (830–910)¹⁵:

Ըստ Տ. Սորոկինայի, Հունայն իբն Բսիակը իրավամբ արաբերեն բժշկական եզրաբանության հիմնադիրն է:

ԻՍՍՀԱԿ ԻԲՆ ՀՈՒՆԱՅՆ ԻԲՆ ԻՍՍՀԱԿ (830–910)

Բսիակ իբն Հունայն իբն Բսիակ, Բսահակ որդի Գոնենի

¹¹ Е. Н. Г р и ц а к. Популярная история медицины. М., 2003, с. 156.

¹² Л. М е н ь е. История медицины, пер. с франц. д-ра И. Оксенова. М., 1926, с. 69–70.

¹³ БМЭ, т. 14, с. 76–77, 180.

¹⁴ Հ. Մ կ ը ո ս չ յ ա ն. Ֆարաջ Ասորու «Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ 99999 երկի արաբական աղբյուրները. – Իրան-նամե 99999, Երևան, 1997, թ. 2-3:

¹⁵ Նույն տեղում:

Գոնենի որդի Բսահակը, որը միջնադարում ավելի նշանավոր էր քան իր հայր Գոնենը, թարգմանել է հույն հեղինակներին և XII–XIII դդ. ֆրանսիական (նաև փարիզյան) բժիշկների համար դարձել մեծ հեղինակություն: Հայտնի է, որ Բսահակը ծաղիկ հիվանդության բուժման նպատակով կիրառել է արյուն բաց թողնելու և տաք թրջոցներ դնելու մեթոդները: *Bachtishua*-ն այդ հիվանդության ժամանակ ի հայտ եկող մանուշակագույն և սև երանգներով թարախաբշտերը համարել է վատ նշան¹⁶:

Լ. Մենյեն Գոնենի որդի Բսահակին անվանում է նաև Բախտիշուա, ինչը ինքնին վկայում է, որ ինչպես որդի Բսահակը, այնպես էլ հայր Գոնենը պատկանել են նույն Բախտիշուա ընտանիքին և կրել նույն ազգանունը, ուստի և շարունակել են մնալ հայ-քրիստոնյա-նեստորական:

Ըստ Լ. Հովհաննիսյանի՝ հայկական բժշկության վրա արաբական բժշկության հսկայական ազդեցության մասին է վկայում այն փաստը, որ X դ. սկսած հայկական բժշկական աշխատություններում մշտապես մեջբերումներ են կատարվել ինչպես հունական, այնպես էլ արաբական բժիշկների աշխատություններից: Դրանք էին Ավիցենան, Սապիդ Կուրանը, Բուանն բեն-Մեսունեն, Գոնեյսը և նրա որդի Բսահակը¹⁷:

ՁԻԲՐԱԻԼ ԻԲՆ ԲԱԽՏԻՇՈՒ (X դար)

Gibra'il ibn Bahtisu

Ձուրջուս իբն Բախտիշուի թոռ Ձիբրաիլ իբն Բախտիշուն X դ. եղել է Բախտիշու արքունական բժիշկների տոհմի երրորդ սերնդի ներկայացուցիչը և իր ժամանակի հռչակավոր բժիշկներից մեկը¹⁸: Երկար տարիներ ղեկավարել է միջնադարյան մուսուլմանական աշխարհում մեծ համբավ ունեցող երեք խոշոր հիվանդանոցներից մեկը՝ Բաղդադի «ալ-Ադուդի» հիվանդանոցը: 981 թ. այն կառուցվել է խալիֆայության Ադուդ ալ-Դաուլախի (949–983) տիրակալի հրամանով, որն առատորեն հովանավորում էր գիտության ու արվեստների զարգացումը: Հիվանդանոցը կառուցվել է Տիգրիս գետի արևմտյան ափին, այն տեղում, ուր Բաղդադի գլխավոր բժիշկ Ար-Ռազին (850–923) ավելի քան կես դար առաջ կանխորոշել էր որպես Բաղդադի ամենաառողջարար շրջանը: Ապագա հիվանդանոցի տեղը ընտրելիս նա իր օգնականներին հրամայել էր Բաղդադի տարբեր շրջաններում կախել թարմ մսի կտորներ: Այնտեղ, ուր միսը ամենաքիչն էր ենթարկվել նեխման, այդտեղ էլ որոշվել էր կառուցել հիվանդանոցը: Այդ տարածքում էր կառուցվել նաև խալիֆ Հարուն ար-Ռաշիդի ապարանքը:

Բաղդադի այդ հռչակավոր հիվանդանոցում Ձիբրաիլ իբն Բախտիշուի ղեկավարության տակ աշխատում էին 24 բժիշկներ, բազմաթիվ սանիտարներ, ծառաներ, կառավարիչներ, հսկիչներ: Հիվանդանոցը բաղկացած էր մի քանի մասնաշենքերից, որոնցում եղել են լավ կահավորված ու հարմարավետ բազ-

¹⁶ Л. Менье. *Նշվ. աշխ.*, էջ 69–70:

¹⁷ Л. А. Оганесян. *Նշվ. աշխ.*, էջ 207, 216:

¹⁸ Т. С. Сорокина. *Նշվ. աշխ.*, էջ 163–164:

մաթիվ սենյակներ: Յուրաքանչյուր շինություն Տիգրիս գետից մատակարարվել է հոսող ջուր¹⁹:

ԱԲՈՒՍԱՅԵԼ (X դար)

Ջուրջուս (Գեորգի) Բախտիշուի սերունդներից է Աբուսայելը (X դ.), որը եղել է Ավիցենայի ուսուցիչներից մեկը²⁰:

Բախտիշուների բժիշկների հռչակավոր գերդաստանի մասին, ինչպես տեսանք, գրվել են բժշկության պատմությանը (և ոչ միայն) վերաբերող հայ և օտար բազմաթիվ աղբյուրներում, մինչդեռ միայն 1980 թ. Մոսկվայում հրատարակված ԲՄՀ համապատասխան բառահոդովածի հեղինակային կոլեկտիվը և ռուս գիտնական Ս. Մորոկինան²¹ (1994, 2008) են նշում նրանց հայ-քրիստոնյա լինելու իրողությունը: Վերջինս, հավանաբար, այդ փաստը վերցրել է արաբ գիտնական Ա. Խաիրալլահի՝ 1946 թ. Բեյրութում անգլերեն լույս տեսած աշխատությունից²², որը, ցավոք, չունենք մեր ձեռքի տակ:

Այսպիսով, Արաբական խալիֆայության տիրապետության (VIII–XI դդ.) ժամանակաշրջանում արաբական աշխարհում հռչակված արքունական բժիշկների գերդաստանի նախահայրը՝ Ջուրջուս (Գեորգի, Գևորգ) իբն Ջիբրաիլ (Գաբրիել) իբն Բախտիշուն և նրա բազմաթիվ բժիշկ ժառանգներից Բասահկ Բախտիշուն, Գոգեյն բեն Բասահկը, Բասիսակ իբն Հունայն իբն Բասիսակը, Ջիբրաիլ (Գաբրիել) իբն Բախտիշուն, Աբուսայելը եղել են ազգությամբ հայ, դավանանքով՝ քրիստոնյա-նեստորականներ և իրենց կլինիկական, մանկավարժական, տեսական և թարգմանչական ու տերմինաշինական գործունեությամբ հսկայական ավանդ ներդրել ինչպես արաբական, այնպես էլ համաաշխարհային բժշկագիտության զարգացման գործում: Իրողություն, որ հանիրավի դուրս է մնացել հայ բժշկության պատմությունն ուսումնասիրող հայ գիտնականների տեսադաշտից:

О РОДЕ АРМЯНСКИХ ВРАЧЕЙ БАХТИШУ В АРАБСКОМ ХАЛИФАТЕ

АРУТЮН МИНАСЯН

Р е з ю м е

В Арабском халифате с VII в. в ряде других наук быстро стала развиваться медицина. Среди видных врачей были представители армянского рода Бахтишу. В городе Джандишапур жил и работал Джурджус ибн Джибрая ибн Бахтишу, который основал христианскую врачебную школу. Многие из его потомков вплоть до XI в. служили придворными врачами халифов. Среди них были авторы и переводчики медицинских трудов. Абу Саил из рода Бахтишу был одним из учителей Авиценны.

¹⁹ Նույն տեղում:

²⁰ ԲՄՀ, տ. 14, ս. 76-77, 180.

²¹ Տե՛ս նաև Թ. Ս. Շոքոևի և Կ. Մ. Մորոկինայի «История медицины», в 2-х томах. М., 2008.

²² A. A. K h a i r a l l a h. Outline of Arabic Contribution to Medicine. Lebanon, 1946, p. 48.